

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

Անհրաժեշտությունը. Նշված նախագծի ընդունման հրատապությունը պայմանավորված է այլ պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ-ում հայտնաբերված անձանց հետագա հանձնման նպատակով արգելանքի վերցնելու, հետևապես նրանց սահմանադրական իրավունքները սահմանափակելու իրավական ռեժիմի սահմանման անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները. Բանն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կարգավորված չեն այլ պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ-ում հայտնաբերված անձանց հետագա հանձնման նպատակով կալանավորելու օրինականության, հանձնման (էքստրադիցիայի) ենթակա անձի իրավունքներն ու ազատություններն ապահովելու հարցը:

Որոշակի բարդություններ են առաջանում նաև «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. կոնվենցիայի և «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի կողմ հանդիսացող օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող անձանց Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերելիս, երբ անհրաժեշտություն է առաջանում նրանց քրեակատարողական հիմնարկ տեղափոխել, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն կալանավորված յուրաքանչյուր անձ պետք է տարվի դատավորի մոտ, մինչդեռ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող անձանց կալանավորելու (դատարան ներկայացնելու) ընթացակարգ:

Նմանատիպ խնդրի հետ առնչվել են նաև Ուկրաինայի իրավապահ մարմինները: Արդյունքում առկա են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի քանի նախադեպեր, երբ դատարանն արձանագրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված դրույթի (հանձնելու նպատակով կալանավորում) խախտում («СОЛДАТЕНКО против УКРАИНЫ» (№ 2440/07), «НОВИК против УКРАИНЫ» (№ 48068/06), «СВЕТЛОПУСОВ против УКРАИНЫ» (№ 2929/05)):

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականություն. Նշված նախագծի ընդունմամբ, գործող քաղաքականության մեջ, ըստ էության փոփոխություններ չեն կատարվի:

Կարգավորման նպատակը և բնույթը. Նախագծի նպատակն է ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրությանը և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի պահանջներին, բարձրացնել հանձնման նպատակով ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության կառուցակարգի արդյունավետությունը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք: Նախագիծը մշակվել է ՀՀ գլխավոր դատախազի օգնականի, ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի և միջազգային իրավական կապերի բաժնի կողմից:

Ակնկալվող արդյունքները. Նախագծով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց ձերբակալման, ժամանակավոր կալանավորման, հանձնման նպատակով կալանավորման հիմքերը, ժամկետները և դրանք երկարացնելու կարգը, արգելանքի վերցված անձանց իրավունքները և դրանց ապահովումը: Հստակ տարբերակված են նաև հանձնման նպատակով կալանավորման միջնորդությամբ դատարան դիմելու սուբյեկտները: Մասնավորապես, եթե քրեական գործը գտնվում է այլ պետության նախաքննական մարմինների վարույթում, ապա հանձնման նպատակով կալանավորելու միջնորդությամբ դատարան է դիմում դատախազը, իսկ այլ պետության դատարանի վարույթում գտնվող քրեական գործերով ՀՀ արդարադատության նախարարությունը:

Նախագծի ընդունմամբ իրավական կարգավորում կստանան հանձնման նպատակով մարդկանց ազատությունից զրկելու իրավական ընթացակարգը, դատական վերահսկողության իրականացման հիմքերը և պայմանները: